ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

1.Կարգավորման օրենսդրական դաշտի
կատարելագործում..... 4

2. Սակագնայի քաղաքականություն..... 10

3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության
մոնիթորինգ …….....…… 14

4. Ներդրումային ծրագրեր և սպառողների
սպասարկման որակի ցուցանիշներ 17

5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների
և զանգվածային լրատվամիջոցների հետ
տարվող աշխատանքներ..... 21

6. Համագործակցություն միջազգային
կազմակերպությունների հետ 22

7. Էլեկտրական էներգիայի և բնական գազի
սպառման ծավալների կանխատեսում 23

Նախաբան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության, փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի
- վարչություն՝

- տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
- ներդրումային ծրագրերի բաժին,

- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- տնտեսական բաժին,
- հաշվապահական հաշվառման բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

Էներգետիկայի բնագավառում սպառողների սպասարկման որակի բարելավման և մատակարար-սպառող հարաբերություններում առաջացած խնդիրների կարգավորման նպատակով 2011 թվականին մի շարք փոփոխություններ են կատարվել էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում: Մասնավորապես, էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների փոփոխությունների համատեքստում 2012 թվականի հունվարի 1-ից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն պետք է էապես կրճատի սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների տևողությունը և քանակը: Ընդ որում, սահմանվել է, որ քաղաքային համայնքներում արտապլանային որևէ ընդհատման տևողություն չպետք է գերազանցի 4 ժամը՝ ներկայիս 8 ժամի փոխարեն, իսկ գյուղական համայնքներում 8 ժամը՝ ներկայիս 16 ժամի փոխարեն: Կրճատվել է նաև պլանային ընդհատումների տևողությունը. սահմանվել է, որ որևէ պլանային ընդհատման տևողություն չպետք է գերազանցի 6 ժամը՝ ներկայիս 8 ժամի փոխարեն: Բացի այդ, սահմանվել է, որ 2012 թվականի հունվարի 1-ից կսահմանափակվի տարեկան պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևողությունը, որը տարեկան կտրվածքով քաղաքային համայնքների սպառողների համար չպետք է գերազանցի 24 ժամը և մնացած բոլոր սպառողների համար՝ 72 ժամը: Այս աշխատանքները կրելու են շարունակական բնույթ, իսկ 2012 թվականին հանձնաժողովը կվերանայի նաև բնական գազի մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները:

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման, ինչպես նաև փոքր և

միջին բիզնեսի զարգացման համար առավել նպաստավոր միջավայր ստեղծելու նպատակով հանձնաժողովը մի շարք փոփոխություններ է կատարել իր նախկին որոշումներում, որոնց արդյունքում՝

- նվազագույնի է հասցվել էլեկտրական ցանցին միանալու ցանկություն ունեցող անձի կողմից միացման գործընթացում իրականացվող քայլերի քանակը: Սահմանվել է, որ մատակարարը տվյալ անձի դիմումի հիման վրա նրա հետ կնքում է միացման, ապա նաև էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրեր: Դիմում ներկայացնելու պահից մինչև էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիր կնքելը դիմող անձի և մատակարարի միջև տարբեր փաստաթղթերի ներկայացման և համաձայնեցման նպատակով իրականացվող քայլերի քանակը նախկին ութի փոխարեն ներկայունս երկուս է.
- նվազեցվել են նաև դիմող անձանց սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացնելու նպատակով միացման և էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրեր կնքելու առավելագույն ժամկետները: Արդյունքում, մասնավորապես, 0.22կՎ լարման սպառողների սպառման համակարգերի միացման ժամկետները պարզ սխեմաների դեպքում կրճատվել են շուրջ 3 անգամ, 0.4կՎ լարման մինչև 30 կՎա հզորության սպառողներինը պարզ սխեմաների դեպքում՝ 9, իսկ նախագծային լուծումների անհրաժեշտության դեպքում՝ 3 անգամ: Այս ժամկետները կրճատվել են նաև մնացած բոլոր սպառողների դեպքում՝ միջինը 2 անգամ.
- փոքր և միջին բիզնեսի հատվածի համար նվազեցվել են միացման վճարները, մասնավորապես 0.22 առևտրային սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման վճարները հավասարեցվել են նույն լարման առանձնատների միացման վճարներին, իսկ 0.4 կՎ լարման ցանցին միացման վճարները, որոնք սահմանվել էին հզորության տարբեր միջակայքերի համար, այժմ սահմանվել են յուրաքանչյուր միավոր հզորության համար: Արդյունքում՝ 0.22 կՎ լարման առևտրային սպառողների միացման վճարները նվազել են ավելի քան 4 անգամ, իսկ 0.4կՎ լարման առևտրային սպառողներինը՝ միջինը շուրջ 2 անգամ:

2012 թվականին հանձնաժողովը կվերանայի նաև բնական գազի բաշխման ցանցին միացման գործող իրավական դաշտը և կսահմանի միացման վճարներ, ինչն

ավելի մատչելի կդարձնի նոր սպառողների միացումը բնական գազի բաշխման ցանցին:

Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները վերանայելիս առաջին հերթին լուծում է տրվել մատակարար-սպառող առևտրային հարաբերություններում ծագած վիճելի հարցերին: Մասնավորապես, իրավաբանական անձանց առևտրային հաշվառքի սարքով հաշվառված բնական գազի քանակը «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում կիրառվող չափումների կատարման մեթոդիկաներով ճշգրտվում է կախված բնական գազի ճնշումից և ջերմաստիճանից, ինչը հաճախ հաշվարկների հիմքում դրվող հարաչափերի պատճառով մատակարարի և սպառողների միջև տարակարծությունների տեղիք է տալիս: Ուստի հանձնաժողովը նախ սահմանել է, որ սպառողի ծախսած բնական գազի քանակը չի ճշգրտվում, եթե վերջինս օգտագործում է ցածր ճնշման բնական գազ, և բնական գազի ծախսը հաշվառվում է մինչև G6 (ներառյալ) տիպի բնական գազի մեկ առևտրային հաշվառքի սարքով: Մնացած բոլոր սպառողների մոտ խնդրի կարգավորման նպատակով «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին հանձնարարվել է մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը իր միջոցներով տեղադրել բնական գազի ջերմաստիճանի և ճնշման էլեկտրոնային ճշտիչներ, որոնք ավտոմատ կերպով կճշգրտեն բաժանորդի ծախսած բնական գազի քանակը՝ բացառելով մարդկային գործոնը հաշվարկների իրականացման ընթացքում: Բացառություն կկազմեն միայն RG տիպի հաշվիչներ ունեցող սպառողները, որոնց առևտրային հաշվառքի սարքերն արդեն իսկ փոխարինման կարիք ունեն: Սակայն 2013 թվականի ընթացքում այս խնդիրը ևս կլուծվի՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի միջոցներով: Այնուհետև, 2011 թվականի նոյեմբերի 1-ից »ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն իր միջոցներով կիրականացնի նաև կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքերի սպասարկման, այդ թվում՝ ստուգաչափման աշխատանքներ, որպեսզի վերջիններս հարկադրված չլինեն զբաղվելու իրենց գործունեությանը չառնչվող խնդիրների լուծմամբ և ազատվեն այդ նպատակով կատարվող ծախսերից:

Մատակարար-սպառող հարաբերություններում առևտրային հաշվառքի սարքերի խափանման դեպքերում ծախսված էլեկտրական էներգիայի կամ բնական

գազի քանակի վերահաշվարկի ընթացքում ծագող տարաձայնությունների կարգավորման նպատակով ամբողջությամբ վերանայվել են ինչպես բնական գազի, այնպես էլ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում այդ հարաբերությունները կարգավորող դրույթները: Մասնավորապես, արգելվել է նման դեպքերում դադարեցնել սպառողների էներգամատակարարումը մինչև վեճերի վերջնական լուծումը, խստացվել է մատակարարների պատասխանատվությունը, սահմանվել են վերահաշվարկների հստակ մեխանիզմներ և երկկողմանի պատժամիջոցներ՝ առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքին միջամտելու համար:

2012 թվականին հանձնաժողովը կշարունակի էներգետիկայի բանագավառի իրավական դաշտի կատարելագործման աշխատանքները մատակարար-սպառող հարաբերություններում ծագող վեճերի և տարաձայնությունների նոր արդյունավետ կարգավորման հավասարակշռող մեխանիզմներ ներդնելու նպատակով:

2011 թվականին, հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ աշխատանքներ են տարվել բնագավառում արդար և բաց մրցակցության երաշխավորման և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման ուղղությամբ, որոնցից հատկապես կարևորվում են.

- հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման հետ կապված հարաբերությունների կարգավորումը,
- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի կանխավճարային և հետվճարային հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի արխիվների պահպանման ստանդարտների սահմանումը,
- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դասակարգ-մանը, շուկաների սահմանմանը և դրանց կարգավորմանը ուղղված աշխատանքների իրականացումը,
- ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորների ամրակցված կապի ցանցերի զարգացման խրախուսումը:

Հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից ստորգետնյա ինժեներական կառույցներից խողովակների ազատ թողունակության վարձակալության կանոնակարգումը այլընտրանքային օպերատորներին հնարավորություն է ընձեռել ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցելու նպատակով օգտագործելու գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորի հանրային ամրակցված հեռախոսացանցի տրանսպորտային ենթակառուցվածքները (խողովակաշարերը): Հաշվի առնելով միջազգային և ԱՊՀ անդամ երկրների փորձը՝ սահմանվել են նաև խողովակաշարերի ազատ թողունակության վարձակալության ամսական վճարները, որոնք 2011 թվականի դրությամբ հարավկովկասյան տարածաշրջանի երկրներում սահմանված վճարների համեմատությամբ մի քանի անգամ ցածր են:

2011 թվականին հանձնաժողովի որոշմամբ «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ները պարտավորեցվել են իրենց ինտերնետային կայքերում տեղեկատվություն հրապարակել բջջային կապի մատուցվող ծառայությունների հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ: Այս որոշման կիրարկմամբ ապահովվել է վերոհիշյալ ընկերությունների տնտեսական գործունեության թափանցիկությունը, և հնարավորություն է ընձեռվել տեղեկանալ վերջիններիս գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների մասին:

2011 թվականին, հաշվի առնելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվությունների տրամադրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, փոփոխման, վերաձևակերպման և ռադիոհաճախականության պարտադիր վճարների մասով լրամշակվել և հաստատվել է ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը:

Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը խթանելու նպատակով 2012 թվականին հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կլինի լայնաշերտ (արագագործ) ինտերնետ հասանելիության ծառայությունների բարելավման հարցը, ինչի համար կիրականացվեն արագագործ ինտերնետային ծառայություններ մատուցելու հնարավորությունների մեծացմանը նպաստելուն ուղղված քայլեր՝ հատկապես հանրապետության մարզերում: Հանձնաժողովը կխրախուսի ընկերությունների բոլոր նախա-

ձեռնությունները, որոնք կնպաստեն տեղեկատվական և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում նոր տեխնոլոգիաների ներդրմանը: Այս համատեքստում կմշակվեն իրավական ակտեր, որոնք կնպաստեն ինտերնետ հասանելիության ծառայությունների սակագների իջեցմանը և լայնաշերտ (արագագործ) ինտերնետ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացմանը: 2011 թվականին ինտերնետ հասանելիության ծառայություններ ստացող բաժանորդների թիվը՝ ներառյալ GPRS տեխնոլոգիայով օգտվողներինը, արդեն իսկ հասել է շուրջ 1,7 միլիոնի, իսկ լայնաշերտ ինտերնետ ծառայություններ ստացողների թիվն աճել է շուրջ 30%-ով: Վերանայվել և շուրջ 50 տոկոսով նվազեցվել է մեծածախ ինտերնետի, այն է՝ 1 Մբիթ/վ արագությամբ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության ամսական սակագինը, որը հաջորդ տարվա ընթացքում կպահպանի կայուն նվազման միտումը: Արդյունքում նվազել են նաև վերջնական սպառողներին ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագները, որոնք առկա մրցակցության պայմաններում կշարունակեն նվազել նաև 2012 թվականին:

Հանձնաժողովը 2012 թվականին ևս կշարունակի էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տեղական և արտերկյա ներդրումների խթանմանն ուղղված քաղաքականությունը: Նախատեսվում է ընդունել նոր իրավական ակտեր, որոնք կխթանեն օպերատորների ենթակառուցվածքների համատեղ օգտագործումը: Կշարունակվեն նաև էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում լիցենզավորման և ռադիոհաճախականությունների տրամադրման գործընթացների պարզեցման, ինչպես նաև հեռահաղորդակցության բնագավառում պարբերաբար ծագող խնդիրների լուծման նպատակով գործող իրավական դաշտի կատարելագործման աշխատանքները:

2012 թվականին աշխատանքներ կիրականացվեն հանրային ամրակցված հեռախոսացանցի բաժանորդային գծերի համատեղ օգտագործման կանոնակարգի մշակման համար: Այս կանոնակարգի ընդունումը դիտարկվում է որպես լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների շուկայում մրցակցության ապահովման էական գործոն, որը կնպաստի հեռահաղորդակցության շուկայում այլընտրանքային օպերատորների գործունեության ծավալմանը՝ նրանց հնարավորություն ընձեռելով լայնաշերտ ինտերնետ հասանելիության

ծառայություններ մատուցելու նպատակով օգտագործելու գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորի հանրային ամրակցված հեռախոսացանցի վերջին մղոնը կազմող ենթակառուցվածքները (բաժանորդային գծերը):

2012 թվականին կշարունակվեն հետազոտությունները բջջային կապի ցանցերում համարների տեղափոխելիության ծառայության ներդրման ուղղությամբ: Համարների տեղափոխելիության նպատակը բաժանորդներին համարի պահպանմամբ բջջային օպերատորների ընտրության հնարավորություն ընձեռելն է: Սա էական ազդեցություն կունենա բջջային կապի ծառայությունների շուկայի վրա, քանի որ կխթանի մրցակցությունը շուկայի մասնակիցների միջև, ինչն իր հերթին կհանգեցնի օպերատորների կողմից բաժանորդների սպասարկման որակի բարձրացմանը և ծառայությունների սակագների առավել մատչելիությանը:

2012 թվականին հանձնաժողովը կշարունակի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դասակարգման և շուկաների սահմանման աշխատանքները, որոնք ավարտելուց հետո ձեռնամուխ կլինի սահմանված յուրաքանչյուր շուկայի առանձին վերլուծությանն ու կարգավորմանը:

2. Սակագնային քաղաքականություն

Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

Հիմք ընդունելով 2011 թվականի էլեկտրական էներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները, 2011 թվականի պետական բյուջեում ամրագրված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի մեծությունը, և 2010 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը 2011 թվականի ապրիլի 1-ից վերանայել է արտադրող կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման

ծառայության մատուցման սակագները, ինչպես նաև «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ների կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման հաստատագրված ամսական վճարները:

Էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու և միաժամանակ 2011 թվականի ապրիլի 1-ից վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի աճ թույլ չտալու նպատակով, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության առաջարկության համաձայն, էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացող լրացուցիչ ֆինանսական ճեղքվածքը փակվել է «Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագնի հաշվարկում ներառված շահույթի և մաշվածության ծախսային հոդվածների նվազեցման հաշվին:

Մինչև 2011 թվականի դեկտեմբերի 1-ը, հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, սահմանված կարգով կճշգրտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

2011 թվականի փետրվար ամսին սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով էր դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները բազիսային սակագներում հաշվի առնելու համար: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, ճշգրտված մանրածախ սակագինը հաշվարկվել է 174.065 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը), որը նախորդ տարվա համար հաշվարկված սակագնից ցածր է 20.935 դրամ/խմ-ով, իսկ Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվող սուբսիդիան հաշվի առնելու պարագայում՝ սպառողների համար կիրառվող սակագնից ցածր է 6.935 դրամ/խմ-ով: Միաժամանակ, սահմանվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի

մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման նոր սակագները:

Ելնելով մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և «Երևան Ջուր» ՓԲԸ-ին մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների 2011 թվականի փաստացի գնահատականներից, 2012 թվականին նույնպես կճշգրտվեն ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման բազիսային սակագները:

Հաշվի առնելով նախընթաց երկու տարիներին միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայում տեղի ունեցած զարգացումներն ու փոփոխությունները, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել ինտերնետ շուկայի զարգացման և մատուցվող ինտերնետ ծառայությունների սակագների նվազման շարունակականությունը, նախատեսվում է վերանայել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության 1 Մբիթ/վայրկյան արագությամբ տվյալների հոսքի առավելագույն սակագնի հաշվարկման բանաձևը, որի կիրառմամբ զգալիորեն կնվազեն «ԱՅՓԻ» տարանցման ծառայության առավելագույն սակագները:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով, նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա ավարտը ճշգրտել և հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2012 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունները:

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող **ֆինանսական հաշվետվությունների** վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար: Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ

տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրված է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նշված ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Հիշյալ աշխատանքների իրականացման արդյունքում կրճատվել են էլեկտրա-էներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները և ներկայացման պարբերականությունները: Մասնավորապես, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կրճատվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները: Էապես կրճատել են նաև մինչև 10 ՄՎտ տեղակայված հզորություն ունեցող էլեկտրական էներգիայի արտադրության և էներգետիկայի բնագավառում կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները:

Ֆինանսատնտեսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան նաև 2012 թվականին: Մասնավորապես, նախատեսվում է լրամշակել և որոշակիորեն կրճատել երկաթուղային տրանսպորտի, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության բնագավառների և մեծածախ ինտերնետ մատակարարող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների ձևերը և ներկայացման պարբերականությունները:

Հաշվի առնելով, որ հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում ընդգրկված են տարաբնույթ գործունեություն իրականացնող ընկերություններ, նախատեսվում է առաջիկայում մշակել և կարգավորվող ընկերություններում ներդնել հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ: Այս ձեռնարկումը հանձնաժողովին հնարավորություն կտա կարգավորվող յուրաքանչյուր ընկերությունից ստանալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն,

արագ և դինամիկ կերպով արձագանքել կարգավորվող ոլորտներում ընկերությունների կազմակերպաիրավական կառուցվածքների, նրանց գործառույթների շրջանակի, ինչպես նաև տնտեսական դաշտում օրենսդրական փոփոխություններին և համարժեք փոփոխություններ կատարել հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում:

2012 թվականի ընթացքում կարգավորվող ընկերությունները կներկայացնեն հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կկատարվի նրանց ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր վեբ կայքում (www.psrc.am) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ

Լիցենզավորման գործառույթն առանձնանում է նրանով, որ թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարող ընկերությունների նկատմամբ:

2011 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը **էներգետիկայի բնագավառում** տրամադրվել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 25, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի կառուցման՝ 1, ջերմային էներգիայի փոխադրման ցանցի կառուցման՝ 1, ջերմային էներգիայի բաշխման ցանցի կառուցման՝ 1 և փոքր ՀԷԿ-երում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության 11 լիցենզիա: Միաժամանակ, երկարաձգվել են նախկինում տրամադրված 16 լիցենզիաների գործողության ժամկետները:

Նույն ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել է էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման՝ 2, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման՝ 5 և ձայնային ծառայությունների մատուցման 2 լիցենզիա, իսկ ջրային ոլորտում՝ ջրային համակարգի օգտագործման 1 թույլտվություն:

Կարգավորվող բնագավառներում գործունեության լիցենզիաների (թույլտվությունների) տրամադրման գործընթացը կշարունակվի նաև 2012 թվականին:

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերություններն ապահովում են **ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր**՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: Ակնկալվում է, որ 2011 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարները կկազմեն շուրջ 7,1 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 6,3 մլրդ դրամը, կկազմեն ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը: Ըստ կանխատեսումների՝ 2012 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե կփոխանցվի շուրջ 6,0 մլրդ դրամ:

Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից **լիցենզիաների պայմանների պահպանման** և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին՝ ինչպես ընկերություններից պահանջվող հաշվետվությունների, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող մոնթիորինգի միջոցով:

2011 թվականին ուսումնասիրվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացը: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ ընկերությունը որոշ դեպքերում չի պահպանել նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման ժամկետները, ինչը խոչընդոտել է այդ անձանց ծրագրավորած գործարար ձեռնարկների ժամանակին մեկնարկմանը կամ բնակարանների էլեկտրամատակարարմանը: Նշված խախտումների համար

ընկերությունը ենթարկվել է ֆինանսական պատասխանատվության (տուգանքի)՝ 30 մլն ՀՀ դրամի չափով, իսկ առկա խնդիրների կարգավորման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Բացի այդ, ուսումնասիրվել են նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների կողմից սպառողների էներգամատակարարման ընդհատումների փաստացի տվյալները: Արդյունքում պարզվել է, որ երկու ընկերություններն են խախտել են մատակարարման և օգտագործման կանոններով սպառողների էներգամատակարարման ընդհատումների համար սահմանված ցուցանիշները, որի համար ենթարկվել են ֆինանսական պատասխանատվության (տուգանքի)՝ 15 մլն ՀՀ դրամի չափով և զգուշացվել, որ հետագայում խախտումները կրկնվելու դեպքում կենթարկվեն ավելի խիստ պատասխանատվության:

2012 թվականին կշարունակվեն կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքի ուսումնասիրությունները և պատասխանատվության միջոցների կիրառումը՝ իրենց պարտականություններում թերացող ընկերությունների նկատմամբ:

Հանձնաժողովը հետևողական քայլեր է ձեռնարկում նաև ջրամատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների պահպանման նպատակով: 2011 թվականին պարբերաբար ուսումնասիրվել են «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից հրապարակված գրաֆիկների ու փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշները, որը կշարունակվի նաև 2012 թվականին: Ուսումնասիրությունների վերլուծությունը թույլ կտա համակողմանիորեն գնահատել ընկերությունների կողմից մատուցվող ջրամատակարարման ծառայությունների որակը և քայլեր ձեռնարկել դրանք բարելավելու ուղղությամբ:

2012 թվականին ուսումնասիրություններ կիրականացնեն նաև հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց մոտ՝ պարզելու վերջիններիս գործունեության համապատասխանությունը հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջներին:

4. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում

2012 թվականին հանձնաժողովը կշարունակի էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության կենթարկվեն ընկերությունների 2011 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և կհրապարակվեն համապատասխան վերլուծական տեղեկանքներ: Կշարունակվեն նաև կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կատարելագործման և վերահսկողության աշխատանքները:

Սակագների վրա ներդրումների ազդեցությունը հավասարակշռելու նպատակով հանձաժողովը զգալիորեն նվազեցրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների 2011 թվականի համար համաձայնեցված ներդրումային ծրագրերի ծավալները: Բացի այդ, սահմանվել են մեխանիզմներ՝ ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման միջոցով սակագների վրա ներդրումների ազդեցությունը մեղմելու նպատակով: 2012 թվականին կշարունակվեն նշված ընկերությունների կողմից իրականացվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացում գնահատման չափանիշների կատարելագործմանն ուղղված աշխատանքները: Հանձնաժողովն ջանքեր է գործադրում սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության, սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության ցուցանիշների հավաստիության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Դրանց մակարդակի ճշգրտումը հնարավորություն կտա առավել հասցեական և արդյունավետ իրականացնելու ներդրումները: Ներկայումս սպասարկման որակի ցուցանիշների ծրագրային մեծությունները սահմանվում են հանրապետության յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի համար: Այս մոտեցումը թույլ է տալիս ներդրումներն առաջնահերթ նպատակաուղղել առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը: Հարկ է նշել նաև, որ սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը, սկսած 2005 թվականից, յուրաքանչյուր եռամսյակ

ամփոփվում և հրապարակվում է հանձնաժողովի վեբ կայքում: Այստեղ հրապարակվում են նաև ընկերության ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ վերլուծական տեղեկանքները:

2012 թվականին հանձնաժողովը կքննարկի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2013-2015 թվականների ներդրումային ծրագիրը, նույն ժամանակահատվածի համար կսահմանի սպասարկման որակի ցուցանիշների նոր ծրագրային մեծություններ, ինչպես նաև կամփոփի ընկերության 2011 թվականի ներդրումային գործունեության արդյունքները՝ հաշվի առնելով նաև հանրապետության մարզերի և Երևան քաղաքի համար սահմանված սպասարկման որակի ծրագրային և փաստացի ցուցանիշները:

2012 թվականին կշարունակվի նաև «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, ինչպես նաև կամփոփվեն ընկերության 2011 թվականի ներդրումային գործունեության արդյունքները:

Հանձնաժողովը, հաշվի առնելով 2011 թվականից ուժի մեջ մտած «Գնումների մասին» նոր ՀՀ օրենքի պահանջները և հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող գնումների արդյունավետության շարունակական կատարելագործման ու թափանցիկության բարձրացման անհրաժեշտությունը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ԱրմենՏել» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի համար սահմանել է գնումների իրականացման լրացուցիչ պահանջներ, որի համաձայն՝ ընկերությունների կողմից իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը կհրապարակի ինչպես գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և իրենց վեբ-կայքերում: 2012 թվականին հանձնաժողովը կշարունակի ուսումնասիրել նշված ընկերությունների գնումների գործընթացը և անհարժեշտության դեպքում կկիրառի դրանց թափանցիկության բարձրացման նոր մեխանիզմներ:

Շարունակական բնույթ են կրում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները: Յուրաքանչյուր տարի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-

ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տնողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վատթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարման տնողության ցուցանիշները: Հաշվի առնելով նաև, որ սպառողներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառած ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներկայացվում են նաև հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկի նվազագույն ժամերը, սպառողներն իրենք ևս կարող են հսկողություն իրականացնել մատակարարների կողմից հայտարարված գրաֆիկների պահպանման նկատմամբ:

2012 թվականին հանձնաժողովը կվերանայի նշված հինգ ընկերությունների ջրամատակարարման տնողության փաստացի մեծությունները, ինչպես նաև կսահմանի այդ ցուցանիշների 2013 թվականի ծրագրային մեծությունները:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից տարվող հստակ քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն առաջընթացի մասին: 2011 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում են 111 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 80-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 150 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 480 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 155 ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն ավելի քան 580 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո Հայաստանի Հանրապետությունում կգործեն 191 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 305 ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1060 մլն կՎտժ էլեկտրաէներգիա:

Այս համատեքստում հարկ է նաև նշել, որ հանձնաժողովը փոփոխություններ է կատարել ՀՀ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման

կարգում՝ հնարավորինս կրճատելով փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզիա ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի քանակը:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով և խթանելով փոքր հիդրոէլեկտրա-կայանների կառուցումը, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2011 թվականին՝ մինչև սեպտեմբերի 1-ը, լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու համար հանձնաժողովը կայացրել է 14 ընկերությունների ֆինանսական պատասխա-նատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներ:

2012 թվականին կձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր քայլերը այս բնագավառի զարգացումը խթանելու և նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ, իսկ իրենց պարտավորությունները պատշաճ կերպով չկատարող ընկերությունների նկատմամբ կշարունակվեն կիրառվել համապատասխան տույժեր:

5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներ

Զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքը 2012 թվականին ևս միտված կլինի հանձնաժողովի ընթացիկ գործունեությունն ու ռազմավարությունը ԶԼՄ-ների միջոցով պատշաճ լուսաբանելու և հանրությանն ընկալելի ներկայացնելու խնդրին: Շարունակելով զարգացնել թափանցիկ և հրապարակային աշխատառճը, հանձնաժողովը կփորձի առավելագույնս նպաստել հանրության բոլոր շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով գալիք տարվա համար ծրագրվում է առավել ակտիվ և նախաձեռնող մարտավարություն: Հանձնաժողովի դիտակետում կլինի հանրության հետ հետադարձ կապի ապահովման խնդիրը, սահմանված կարգով և ժամկետներում պատասխաններ կտրվեն բարձրացված գրավոր և բանավոր հարցերին, լրատվամիջոցների համար պարբերաբար կթողարկվեն համառոտ ծանուցումներ, կտրվեն մամլո հաղորդագրություններ, հանձնաժողովի նիստերի մասին ամփոփիչ տեղեկանքներ: Հանձնաժողովի գործունեության և հանրային ընկալման առումով հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին պաշտոնական տեղեկատվությունները

կիրապարակվեն մամուլում և էլեկտրոնային լրատվամիջոցներով: Ինչպես նախորդ տարիներին, 2012-ին նույնպես տեղեկատվության տարածումն ընդգրկելու է հանրապետության ողջ տարածքը: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

Կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծությունը. հանձնաժողովի և կարգավորվող ոլորտների գործունեության մասին հրապարակումները կներկայացվեն աշխատակազմին՝ դրանով իսկ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների և հանրության կարծիքն ու գնահատականը:

2011 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում հանձնաժողովում ստացվել է 125 գրավոր բողոք, իսկ «Հրատապ հեռախոսով» և քաղաքացիների ընդունելության արդյունքում՝ 358, որոնցում բարձրացված բոլոր հարցերին տրվել են համապատասխան ընթացք և լիարժեք պարզաբանում: Քայլեր են ձեռնարկվում սպառողների բարձրացրած հարցերին պատշաճ ընթացք տալու և դրանց լուծման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Խնդրի կարևորման փաստով է պայմանավորված հանձնաժողովի սերտ համագործակցությունը սպառողների շահերը պաշտպանող մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, որոնց ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են հանրային շահի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանը, ներկայացնում իրենց դիրքորոշումը, դիտողություններն ու առաջարկությունները: Այդ նույն կարգավիճակով նրանք մասնակցում են նաև հանձնաժողովի նիստերին: Երկուստեք ընդունելի այս ավանդույթը շարունակություն կունենա նաև առաջիկա տարիներին:

Հետահայաց գնահատելով նախորդ տարիների փորձը, հանձնաժողովը 2012 թվականին ևս անհրաժեշտ քայլեր կձեռնարկի սպառողների և կարգավորվող ընկերությունների իրավունքների պաշտպանության և շահերի հավասարակշռման ուղղությամբ:

6. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Զարգացման և առաջընթացի միջազգային փորձն ուսումասիրելու և կիրառելու

նպատակով հանձնաժողովը կշարունակի ակտիվ համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Հեռահաղորդակցության միջազգային միության և Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի հետ:

2012 թվականին նախատեսվում է հանձնաժողովի մասնագետների գործուն մասնակցությունը էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին, համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթության զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին:

Բացի այդ, ԱՄՆ-ի կարգավորողների ընկերակցության և Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ԱՄՆ-ի Այովա նահանգի կարգավորող մարմնի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև 2010 թվականի հունիս ամսին կնքված համագործակցության հուշագրի շրջանակում նախատեսվում է 2012 թվականին փոխայցելությունների միջոցով ուսումնասիրել երկու երկրների կարգավորման փորձը:

7. Էլեկտրական էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում

Էլեկտրական էներգիայի և բնական գազի հաշվեկշիռների կազմման համար հիմք են ծառայել 2010 թվականի տարեկան և 2011 թվականի 6 ամիսների ընթացքում արտադրված, հաղորդված և բաշխված էլեկտրական էներգիայի, ներկրված և բաշխված բնական գազի փաստացի ցուցանիշներն ու բնագավառի ընկերությունների կողմից ներկայացված նախնական կանխատեսումները, ինչպես նաև կարգավորվող համակարգերի զարգացման միտումները:

Ինչպես երևում է N1 աղյուսակից, 2011 թվականի համեմատությամբ 2012 թվականին կանխատեսվում է էլեկտրական էներգիայի սպառման աճ՝ շուրջ 6.7 %:

2012 թվականին էլեկտրական էներգիայի ընդհանուր արտադրության մեջ ատոմային էլեկտրակայանի մասնաբաժինը կանխատեսվում է 34.6% (2011-ին՝ 35.7%), ջերմային էլեկտրակայաններինը՝ 33.4% (2011-ին՝ 28.1%), հիդրոէլեկտրակայաններինը՝ 31.4% (2011-ին՝ 35.7%), հողմային էլեկտրակայանինը՝ 0.04% (2011-ին՝ 0.04%), կոգեներացիոն կայաններինը՝ 0.46% (2011-ին՝ 0.42%) և կենսաբանական

զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանինը՝ 0.1% (2011-ին՝ 0.04%):

Բնական գազի 2011 թվականին սպասվող և 2012 թվականի կանխատեսվող հաշվեկշիռները տրված են N2 աղյուսակում: Ըստ կանխատեսման, 2011 թվականի համեմատությամբ 2012 թվականին սպառողներին առաքվող բնական գազի ընդհանուր ծավալը կաճի շուրջ 8.9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա համեմատությամբ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ -ում 2012 թվականին նախատեսվող էլեկտրաէներգիայի արտադրության շուրջ 2.3 անգամ աճով:

Աղյուսակ №1

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2011-2012 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

հ/հ	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2011 թ. սպասվող	2012 թ. կանխա-տեսվող
1	**Էլեկտրաէներգիայի արտադրություն, այդ թվում՝**	**մլն կՎտժ**	**7122.6**	**7343.0**
1.1	ՀԱԷԿ	մլն կՎտժ	2543.6	2541.9
1.2	ՀԷԿ-եր, որից՝	մլն կՎտժ	2544.6	2308.4
1.2.1	*«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ*	*մլն կՎտժ*	*679.1*	*600.0*
1.2.2	*«Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ*	*մլն կՎտժ*	*1285.1*	*1100.0*
1.2.3	*«ՁՈՐԱԳԵՏ ՀԻԴՐՈ» ՍՊԸ*	*մլն կՎտժ*	*100.4*	*78.0*
1.2.4	*Մասնավոր փոքր ՀԷԿ-եր*	*մլն կՎտժ*	*480.0*	*530.4*
1.3	«Լոռի-1» հողմային էլեկտրակայան	մլն կՎտժ	2.6	2.7
1.4	«Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայան	մլն կՎտժ	2.6	5.5
1.5	Էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտարության (կոգեներացիոն) կայաններ	մլն կՎտժ	30.0	34.0
1.6	ՋԷԿ –եր, այդ թվում՝	մլն կՎտժ	1999.2	2450.5
1.6.1	*«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ*	*մլն կՎտժ*	*388.3*	910.2
1.6.2	*«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, ընդամենը*	*մլն կՎտժ*	*1610.9*	*1540.3*
1.6.2.1	որից՝ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկ	մլն կՎտժ	1610.9	*1540.3*
2	**Էլեկտրական էներգիայի ծախսը սեփական կարիքների համար**	**մլն կՎտժ**	234.6	341.1
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	3.3%	4.6%
3	**Առաքում կայաններից**	**մլն կՎտժ**	**6888.0**	**7001.9**
3.1	այդ թվում՝ էլեկտրակայաններից, որոնցից առաքված էլեկտրաէներգիան մուտք չի գործում բարձր լարման ցանցեր	մլն կՎտժ	515.2	572.6
4	**Ներհոսք**	**մլն կՎտժ**	171.5	157.0
5	**Ընդամենը մուտք բարձր լարման ցանցեր** (տող3-տող3.1+ տող4)	**մլն կՎտժ**	6544.3	6586.3
6	**Կորուստները բարձր լարման էլեկտրացանցերում**	**մլն կՎտժ**	120.0	121.0
6.1	Նույնը՝ %-ով տող 5-ի նկատմամբ	%	1.8%	1.8%

7	**Արտահոսք**	**մլն կՎտժ**	1280.0	1060.2
8	**Ընդամենը մուտք «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ** (տող3+տող4-տող6- տող7)	**մլն կՎտժ**	**5659.5**	**5977.6**
8.1	որից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար	մլն կՎտժ	250	250
8.2	ներքին շուկայում սպառման համար	մլն կՎտժ	5409.5	5727.6
9	**Կորուստները բաշխիչ ցանցերում**	**մլն կՎտժ**	730.5	733.1
9.1	Նույնը՝ %-ով տող 8.2-ի նկատմամբ	%	13.5%	12.8%
10	**Ներքին սպառում**	**մլն կՎտժ**	**4679**	**4994.5**

Աղյուսակ №2

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2011-2012 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

հ/հ	**Ցուցանիշի անվանումը**	**Չափի միավոր**	**2011 թ.** սպասվող	**2012 թ.** կանխա-տեսվող
1	**Բնական գազի ներկրում, այդ թվում՝**	**մլն խմ**	**1924.9**	**2081.3**
1.1	Ռուսաստանի Դաշնությունից	մլն խմ	**1498.2**	**1728.3**
1.2	Իրանի Իսլամական Հանրապետությունից	մլն խմ	**426.7**	**353.0**
2	**Տեխնոլոգիական կորուստները գազամատակարարման համակարգում**	**մլն խմ**	**143.8**	**143.6**
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	7.47%	6.9%
3	**Գազի ծախսը սեփական կարիքների համար**	**մլն խմ**	**9.9**	**10.0**
3.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	0.51%	0.48%
4	**ԳՍՊԿ և գազատարներ մղված (վերցված) գազի ծավալների սալդո**	**մլն խմ**	**1.5**	**0**
5	**Բնական գազի առաքումը սպառողներին**	**մլն խմ**	**1769.7**	**1927.7**
5.1	որից՝ ջերմային էլեկտրակայաններ	մլն խմ	511.46	640.7
5.2	Արդյունաբերություն	մլն խմ	236.27	250.0
5.3	բյուջետային կազմակերպություններ	մլն խմ	37.38	37.0
5.4	Բնակչություն	մլն խմ	498.64	500.0
5.5	կենտրոնացված ջեռուցման համակարգ	մլն խմ	0.0	0.0
5.6	այլ սպառողներ	մլն խմ	485.95	500.0